# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164. 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

Գործողության ժամկետը 13.08.2029թ.

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 100/33-25

<<16 >>__հուլիսի__2025թ. ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս

*Պատվիրատու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ*

*Նախագծող՝ <<ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Վ. ՂԱԶԱՐՅԱՆ*

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան /Բագրատունյաց փողոց (Գործարանային մետրոյի հարակից կամուրջի տակ) / հեղեղատար համակարգի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:

Նախահաշվային արժեքը կազմում է՝ 21 523.35 հազար դրամ , ներառյալ ԱԱՀ- ն:

Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:

Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան

*«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*
*տնօրեն Ն. Միրեկյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**<u>ՀՀ ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան /Բագրատունյաց փողոց (Գործարանային մետրոյի հարակից կամուրջի տակ) / հեղեղատար համակարգի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը</u>**

***Պատվիրատու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ***

***Նախագծող՝ <<ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ***

***Տնօրեն՝ Վ. ՂԱԶԱՐՅԱՆ***

**Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:**

**Նախագծով նախատեսվում է կատարել հետևյալ շինարարական աշխատանքները՝ հողային աշխատանքների իրականացում ձեռքով և մեխանիզմով, ասֆալտբետոնե ծածկույթի քանդում և վերականգնում մանրահատիկ և խոշորահատիկ ասֆալտբետոնի ծածկույթով խճային հիմքով, եզրաքարերի քանդում և վերականգնում, խրամուղիների մշակում ձեռքով հատակի հարթեցմամբ, ավելորդ գրունտի և շինարարական աղբի բարձում ինքնաթափ մեքենաները և տեղափոխում թափոնատեղի, ստորգետնյա բետոնե առվակների պատերի քանդում և վերականգնում, ավազե նախապատրաստական և պաշտպանիչ շերտերի իրականացում, հեղեղատար համակարգի կառուցման համար նախատեսվում է անցկացնել պոլիէթիլենե ծալքավոր խողովակներ, դիտահորերի և անձրևընդունիչների իրականացում հավաքովի ե/բ տարրերից՝ հիմքի սալ, պատի օղակ, ծածկի սալ, թուջե անձրևընդունիչների տեղադրում:**

*<u>Նախահաշվային մաս</u>*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկներով

Հաշվարկը կազմում է ՝ <u>21 523.35</u> հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը <u>2466.34</u> և մեքենաների շահագործման ինդեքսը <u>3106.54</u>

Նյութերի արժեքն ընդունված է 2024թ. N 10 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմիյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

***Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան***

***Փորձագետ՝ Տ. Վիրաբյան***